ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/151

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ժիլյո» Ա/Կ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 02.05.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.04.2022թ. թիվ 26/26-1/7416-2022 գրությամբ «Ժիլյո» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 20.04.2022թ. թիվ Ե/01/691-22 գրության հիման վրա, 27.04.2022թ. թիվ 26/26-1/7416-2022 գրությամբ նախաձեռնել է «Ժիլյո»

Ա/Կ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ժիլյո» Ա/Կ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Ժիլյո» Ա/Կ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը՝

«Ձեր վարույթում է գտնվում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Ժիլյո» ԱԿ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնվել է 27.04.2022թ.-ին, համաձայն՝ Պատվիրատուի 20.04.2022թ. թիվ Ե/01/691-22 գրության: Ընթացակարգը ի սկզբանե գտնվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի վարույթում և ունեցել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/242 ծածկագիրը, այնուհետև այն փոխանցվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի վարույթ և ստացել է թիվ ՍՑ-ՆԳ-2022/151 ծածկագիրը:

1. Գործի նախապատմությունը.

1.1. Ընկերությունը մասնակցել է Պատվիրատուի 05.11.2022թ.-ին հայտարարած թիվ ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2022/2 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Մրցույթ) 1-ին 2-րդ և 8-րդ չափաբաժիններին: Մրցույթի հայտերի բացման նիստը նշանակված էր 22/11/2021թ-ի ժամը 10:00-ին: Հայտերի գնահատումը իրականացվել է 22.11.2021թ.-ից մինչև 15.04.2022թ.-ը, որի վերաբերյալ կազմվել է 15.04.2022թ.-ի թիվ 2 արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն):

Ըստ արձանագրության «ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2022/2 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին» վերտառությամբ 2-րդ կետի «Ժիլյո» ԱԿ-ի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ Պատվիրատուն 25.02.2022թ-ին ծանուցել է «Ժիլյո» ԱԿ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք: Ընկերությունը սահմանված ժամկետում հայտի շտկումը ուղարկել է Պատվիրատուին, սակայն Պատվիրատուն Ընկերության

հայտը մերժել է պատճառաբանելով, որ Ընկերությունը սահմանված ժամկետում հայտում արձանագրված անհամապատասխա-նությունները չի շտկել: Այնուհետև՝ Պատվիրատուն բավարար գնահատված մասնակիցներին՝ «Էմօշին» ՍՊԸ-ին, «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ին, «Արտ Պլաս» ՍՊԸ-ին և «Շահարտ» ՍՊԸ-ին հրավիրել է գների նվազեցման շուրջ բանակցությունների: Բանակցությունները նշանակվել են 29.03.2022թ-ի ժամը 10:00-ին և 30.03.2022թ.-ի ժամը 10:00-ին (տե՛ս Արձանագրության «Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին» վերտառությամբ 4-րդ կետի 3-րդ ենթակետը), հետևաբար՝ 29.03.2022թ.-ի դրությամբ Պատվիրատուն արդեն մերժել էր Ընկերության հայտը, այսինքն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված (ենթադրյալ) հիմքերն «Ժիլյո» ԱԿ-ի մասով ի հայտ են եկել մինչև 29.03.2022թ.-ը:

Գործի փաստական հանգամանքները.

2.1. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված (ենթադրյալ) հիմքերն «Ժիլյո» ԱԿ-ի մասով ի հայտ են եկել մինչև 29.03.2022թ.-ը, որից 16 (տասնվեց) աշխատանքային օր անց՝ 20.04.2022թ.-ին Ե/01/691-22 գրությամբ Պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն սույն Ընթացակարգը նախաձեռնելու համար:

3. Գործի փաստական և իրավական հիմքերը.

3.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է «Ցուցակում», եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված (ենթադրյալ) հիմքերն «Ժիլյո» ԱԿ-ի մասով ի հայտ են եկել մինչև 29.03.2022թ.-ը, որից 16 (տասնվեց) աշխատանքային օր անց՝ 20.04.2022թ.-ին Ե/01/691-22 գրությամբ Պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն սույն Ընթացակարգը նախաձեռնելու համար: Այսինքն, Պատվիրատուն Ընկերության տվյալները ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկել Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ կարելի է փաստել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել մինչև 29.03.2022թ.-ն՝ Ընկերության կողմից հայտը (ըստ պատվիրատուի) չշտկելու և որպես հետևանք այն մերժելու հիմքով, սակայն Պատվիրատուի կողմից Ընկերության տվյալները ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկվել 20.04.2022թ.-ի թիվ Ե/01/691-22 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյուքնում՝ կարելի եզրակացնել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն

հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: (տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018թ.-ի որոշումը):

Այսպիսով, վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված պարտադիր դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությունը:

Հարկ է նշել, որ վերոգրյալ դիրքորոշումը կրկնում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշումներում արտահայտած դիրքորոշումները (Օրինակ՝ տե՛ս Լիլիթ Դերձյան Ա/Ձ-ի վերաբերյալ 10.12.2021թ.-ի թիվ ՍՑ-ԼՕ-2021/320 որոշումը), բացի այդ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ձևավորել է կայուն նախադեպային պրակտիկա և մերժում է նմանատիպ այն ընթացակարգերը որոնց վերաբերյալ հիմքերը պատվիրատուները ուղարկել են ՀՀ ֆինանսների նախարարություն Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ (տե՛ս ՍՑ-ԼՕ-2021/320, ՍՑ-ՆԳ-2022/85, ՍՑ-ԼՕ-2022/109… որոշումները):

Ուստի կարծում ենք, որ վերոնշյալով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված

պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Ընկերությանը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:,

4. Պահանջը

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 50-րդ հոդվածով և ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 18-րդ կետով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

խնդրում ենք՝

ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Ժիլյո» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/151 ծածկագրով ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/151 ընթացակարգի շրջանակներում 19.05.2022թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.04.2022թ. թիվ Ե/01/691-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից 2021 թվականի նոյեմբերի 5-ին հրապարակվել է ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2022/2 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2021 թվականի նոյեմբերի 22-ին: Ընթացակարգին հայտեր են նաև ներկայացվել «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ի, «ՀԱԷԿ-ի Շինարարություն» ՓԲԸ–ի, «ԺԻԼՅՈ» ԱԿ-ի և «Մ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից:

«ԺԻԼՅՈ» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտում անհամապատասխան էր «Սարքերի և սարքավորումների նկարագիրը»՝ Հավելված 1.1-ը: «ԺԻԼՅՈ» ԱԿ-ին ներկայացվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով: «ԺԻԼՅՈ» ԱԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է վերանայված Հավելված 1.1-ը, որով

ներկայացված տեղեկատվությունը, սակայն, չի համապատասխանել հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ:

Կից ներկայացվում է վերոգրյալ ընկերության կողմից ներկայացված հայտի, ընկերությանը ներկայացված ծանուցումների, ծանուցումների պատասխանների, հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենները, ինչպես նաև հրավերով հրապարակված սարքերի և սարքավորումների ցանկը և ծավալաթերթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/151 ընթացակարգի շրջանակներում 19.05.2022թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/151 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/151 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀՀ Արարատի մարզի Ազատավան, Դվին, Ղուկասավան, Նոր Կյանք, Նոր Ուղի, Ոստան, Ուրցաձոր, Սիսավան, Շահումյան, Արտաշատ և Վերին Արտաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների կատարման նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2022/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Ժիլյո» Ա/Կ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ նիստը տեղի է ունեցել 2021թ. նոյեմբերի 22-ից մինչև 2022թ.-ի ապրիլի 15-ը:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություն «Ժիլյո» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտում, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում՝ «Սարքերի և սարաքավորումների

նկարագրում», իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում և ծավալաթերթ-նախահաշվում՝ ներկայացված կշիռները չեն համապատասխանել հրավերով սահմանված շեղման չափին, և որոշում կայացրել ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն արձանագրել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում կայացրել Ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 20.04.2022թ.՝ թիվ Ե/01/691-22 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2022թ. թիվ 26/26-1/7416-2022 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 20.04.2022թ. թիվ Ե/01/691-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Ժիլյո» Ա/Կ-ի դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, «ՀՀ Արարատի մարզի Ազատավան, Դվին, Ղուկասավան, Նոր Կյանք, Նոր Ուղի, Ոստան, Ուրցաձոր, Սիսավան, Շահումյան, Արտաշատ և Վերին Արտաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների կատարման նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2022/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Ժիլյո» Ա/Կ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ նիստը տեղի է ունեցել 2021թ. նոյեմբերի 22-ից մինչև 2022թ.-ի ապրիլի 15-ը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություն «Ժիլյո» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտում, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում՝ «Սարքերի և սարաքավորումների նկարագրում», իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում և ծավալաթերթ-նախահաշվում՝ ներկայացված կշիռները չեն համապատասխանել հրավերով սահմանված շեղման չափին, և որոշում կայացրել ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն արձանագրել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում կայացրել Ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 20.04.2022թ.՝ թիվ Ե/01/691-22 գրությամբ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.1, 8.2, 8.9, 8.10 և 8.14 ենթակետերի համաձայն՝

8.1 Հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 17-րդ օրվա ժամը 10:00-ին: (…)

8.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը յոթանասունհինգը չգերազանցելու դեպքում հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տաս, իսկ գերազանցելու դեպքում՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի

8.9 Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

(…)

8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

(…)

8.14 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվել են 05.11.2021թ.-ին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2022/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ իրականացված գործողությունները և այն համադրելով կիրառման ենթակա իրավական կարգավորումների հետ՝ հարկ եմ համարում արձանագրել, որ ***<u>հնարավոր չէ փաստել, թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած հայտի՝ Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխանությունների արձանագրման, Ընկերությանը Կարգի 41-րդ կետի համաձայն՝ նույն օրը արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցելու, ինչպես նաև արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ մեկ աշխատանքային օր տրամադրելու և անհամապատասխանությունները չշտկելու հիմքով Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ որոշումները երբ են կայացվել,</u>***

<u>որպիսի պայմաններում հնարավոր կլիներ արձանագրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների իրավաչափությունն, ինչպես նաև որպես հետևանք Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալը, որի հիման վրա էլ Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթը, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:</u>

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը

Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում հնարավոր չէ արձանագրել Պատվիրատուի կողմից Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթի պահպանումը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ հնարավոր չէ արձանագրել, թե երբ է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտի մերժման վերաբերյալ որոշում կայացվել:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ժիլյո» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.04.2022թ. թիվ 26/26-1/7416-2022 գրությամբ «Ժիլյո» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**